

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N 9

քաղ. Երևան

«14» դեկտեմբերի 2018 թ.

ՀՀ ՏԶՆ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), մի կողմից, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Անի Սուրենի Օրոսյանի (այսուհետ՝ Համապատասխան մարմին) և Համլետ Սոսինի Լպուտյանը (ծնված՝ 1953 թ. դեկտեմբերի 6-ին, բնակության վայր՝ ք.Երևան, Նոր Նորքի 9-րդ գանգվ., 52., 57 բն.), անձնագիր N AN 0255667 տրված 005-ի կողմից՝ 2012թ. նոյեմբերի 9-ին, հանրային ծառայության համարանիշ 1612530153, մյուս կողմից (այսուհետ՝ փորձագետ) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ա Ռ Ա Ր Կ Ա Ն

1.1. Համապատասխան մարմինը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է սույն պայմանագրի 1.3-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները սույն պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է Պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի պետին: Աշխատանքների կատարման վայրն է՝ համապատասխան մարմնի գտնվելու վայրը:

1.3. Սույն պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1.3.1 հանձման-ընդունման ենթակա անշարժ գույքի անվանացանկերի հստակեցմանն ուղղված խորհրդատվություն:

1.3.2 ՀՀ պետական մարմինների հետ տարվող հանձման-ընդունման աշխատանքների ընթացքում ծագած խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված խորհրդատվություն, այդ գործընթացում իրականացվող աշխատանքներին աջակցում:

1.3.3 ՀՀ պետական մարմինների չգրանցված անշարժ գույքի գրանցում իրականացնելու գործընթացում ծագած խնդիրների լուծման վերաբերյալ խորհրդատվություն:

1.3.4 հանձման-ընդունման աշխատանքների իրականացման համար անհաժեշտ աշխատանքային գրաֆիկների կազմում:

1.4. Փորձագետի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է հիմնական:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.2. Բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.3. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.5. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու համապատասխան մարմնից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Համապատասխան մարմինը պարտավորվում է՝

2.3.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Սահմանված կարգով փորձագետին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել կազմակերպությունում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Համապատասխան մարմինն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՍՆԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1. Փորձագետի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 9:00-ից, ավարտը՝ ժամը 18:00:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար համապատասխան մարմինը փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 212 000 (երկու հարյուր տասներկու հազար) դրամ:

4.2. Փորձագետի համար հավելավճարներ, լրավճարներ չեն սահմանվում:

4.3. Փորձագետին արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսի չափով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

5.2. Սույն պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2018 թվականի դեկտեմբերի 17-ից և գործում է երեք ամիս ժամկետով մինչև 2019 թվականի մարտի 17-ը:

7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման, կամ անպատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար

Անի Օբոսյան



Փորձագետ

Համլետ Լպուտյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 141 -Ա « 30 » 11 2018թ.

ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 398-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ մասի 12-րդ կետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

1. Հաստատել պետական գույքի կառավարման կոմիտեի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ



Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2018 թվականի 2018 թվականի 2018 թվականի 2018 թվականի 2018 թվականի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանությանն ամրացված չօգտագործվող անշարժ գույքը ընդունելու և հաշվեկշռում հաշվառելու աշխատանքներին օժանդակելու, այդ աշխատանքները նախապատրաստելու և իրականացնելու նպատակով պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնում ներգրավել մեկ փորձագետ երեք ամիս ժամկետով:

1. Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

1) տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, հողային օրենսգրքերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Պետական գույքի կառավարման մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն,

3) ունենա տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

4) պետական գույքի կառավարման ոլորտին անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում և այդ բնագավառում երեք տարվա աշխատանքային փորձ,

5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. Փորձագետի կողմից իրականացվող աշխատանքներն են.

1) հանձման-ընդունման ենթակա անշարժ գույքի անվանացանկերի հստակեցմանն ուղղված խորհրդատվություն,

2) ՀՀ պետական մարմինների հետ տարվող հանձման-ընդունման աշխատանքների ընթացքում ծագած խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված խորհրդատվություն, այդ գործընթացում իրականացվող աշխատանքներին աջակցում,

3) ՀՀ պետական մարմինների չգրանցված անշարժ գույքի գրանցում իրականացնելու գործընթացում ծագած խնդիրների լուծման վերաբերյալ խորհրդատվություն,

4) հանձման-ընդունման աշխատանքների իրականացման համար անհաժեշտ աշխատանքային գրաֆիկների կազմում:

3. Փորձագետը պարտավորվում է պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի պետին ներկայացնել հաշվետվություն իր կողմից իրականացրած աշխատանքների մասին աշխատանքներն ավարտելուց հետո (աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտից հինգ աշխատանքային օր առաջ):

Փորձագետի կողմից ներկայացված հաշվետվությունը կգնահատվի դրական կամ բացասական: